

Գ Ա Յ Յ Ր Ե Ն Ի Բ

10
Փարայ

ՕՐԱԹԵՐԹ

10
Փարայ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայրենիք ամեն օր կը հրատարակուի, տարեկան գինն է Պոլսոյ եւ զանաւոյց համար 7 արծար մեծիտ կանխիկ. զանաւոյց քրատարութեան ծախքը մեր վրայ է: Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդք ալ կը կրկնուին:

Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Ռիզա փաշա խան Թ. 44: Խմբագրութեան ուղղեալ գիր ետ չե տրուիր: Ծանուցման տողը մեկ անգամի համար 3 դրու է. աւելի անգամի համար սակարկութիւն կը լայ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՕՐՈՒԱՆ ԾԱՆՐԱԿՆԻՈՒ ԽՆԴԻՐԸ
ՎԱՆԱՅ ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՑԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Օրուան ծանրակշիւ խնդիրն է Վանայ վարժապետանոցին փակման առաջարկը, զոր Միացեալ ընկերութեան Տնօրէն Ժողովն մատոյց նոյն ընկերութեան կեդրոնական Ժողովին անցեալ կիրակի օր, և սրոյ տեղեկագիրն երկու օր յառաջ կարդացինք յառօք սրտի յազդային լրագիրս:

Այն պատճառաբանութիւնը, որոնցմով Տնօրէն Ժողովը ատենապետ Մ. Չերազ էֆէնտին կը ջանայ ընկերութեան և ազգին առջև պատասխանատուութենէ զերծ մնալ, կարդացինք ուշի ուշով. և ահա կը փութանք այդ մասին մեր ունեցած գիտողութիւններն ներկայել ընկերութեան Տնօրէն և կեդ. Ժողովը և ազգին:

Ուրիշ առթիւ յայտնած եմք արդէն մեր այն կարծիքը թէ, մեր արդի վիճակին մէջ եթէ միտնարական բան մը կայ, որ ուղղակի օգնէ մեր ապագային, այն իսկ է Միացեալ ընկերութիւնն, որոյ դէմ ելած ուղղակի և անուղղակի հարուածներն վանելու համար կարելի միջոցները հետզհետէ ի գործ դրինք մեր յօդուածոց մէջ:

Այլ սակայն ընկերութիւնն ի ներքուստ պառակտեալ, արտաքուստ հարուածեալ, ազգայնոց նիւթական օգնութիւնն հետզհետէ նուազեալ լինելով, բարոյական ամեն օգնութիւն ընդունայն եղան, և ինչ որ տարիէ մ'ի վեր իրարու յաջորդող Տնօրէն Ժողովներն իրենց շրջաբերականաց միջոցաւ կը յայտարարէին, դանդաղեցնել նիւթական նպաստից նուազման դէմ, այսօր այդ յայտարարութեանց հետևանքը, նիւթական անձկութեան առաջին պտուղը կերելու այն է վարժապետանոցին փակման առաջարկը:

Տնօրէն Ժողովն այժմ կը յայտարարէ թէ, «իւր յայտագիր պիտի պարունակէ լոկ նախնական կրթութիւն, իւր երկու աստիճաններով, նախակրթութիւն գիւղերու համար և բարձրագոյն նա-

խակրթութիւն (*) կեդրոն գիւղաքաղաքներու և քաղաքներու համար»։ Թէ բարձրագոյն նախակրթարանի ուսումնաւարտ աշակերտներն կրնան մի օր դաստուռ լինիլ գիւղական նախակրթարանաց և մինչև իսկ բարձրագոյն նախակրթարանաց մէջ, առանց պէտք ունենալու յատուկ վարժապետանոցի»։ Թէ, «եթէ մեր այս յայտագիրն արժանանայ ընդունելութեան, բոլոր վարժարաններն պիտի համակերպենք նրմա, փակելով Վանայ վարժապետանոցն, որ աւելորդ կը լինի այսուհետև»:

Տնօրէն Ժողովն կը խոստովանի թէ վարժապետանոցին փակումն ծանրակշիւ իրողութիւն մ'է. ուստի կը փութայ պատճառաբանել և Հայաստանի գիւղօրէից մէջ նախակրթութիւն ծաւալելու հարկին վրայ պնդել, ընկերութեան միջոցներով կարելի եղածին չափ աղքատները կարելի եղածին չափ շուտ դաստիարակելու սպառնալիցութիւն տալով:

Անկարելի է սր Հայ մը ծանօթացած ըլլայ իւր հայրենակցոց վիճակին ի Հայաստան, և չմիայն աղաղակել ընդ Տնօրէն Ժողովը թէ նախակրթութիւնն փութանալի պէտք է տարածել ի Հայաստան:

1871 հոկ. 8 թուականաւ Ազգ. Ժողովոյն մատուցեալ հարտահարութեանց տեղեկագիրը ստիպողականութիւն տալով դաստիարակութեան՝ սա տողերն արձանագրած է. «Աղքատին դաստիարակութեան նախնական ընթացքի հիմ-

(*) Լաւ է ըսել գիւղային նախակրթութիւն և քաղաքային նախակրթութիւն, կամ գիւղային նախակրթարանը և քաղաքային նախակրթարանը. որոց երկուքն ուսմանց յայտագիրը իրարմէ ըստ տեղական պիտոյցի կը դանաղանին. գիւղացւոց պէտք եղած ուսմունք այլ են, որք նաև գիւրաւանդելի և համառօտ պէտք է լինին. և քաղաքացւոց ուսմունք այլ, որք աւելի ընդարձակ կրնան լինիլ: Գիւղական նախակրթութիւնն պարտաւորիչ պէտք է լինի, այնպէս որ քաղաքացիք իսկ երբ անկարող լինին քաղաքային նախակրթարան մ'ունենալ, պարտաւոր պէտք է լինին դէթ գիւղային նախակրթարան մ'ունենալ:

նական յատակագրի մը պէտք է, առ հասարակ բոլոր հայաբնակ գիւղօրէից մէջ ուսանելու հարկադիր և գիւրաւանդելի. և իւրաքանչիւր դաւառի մէջ գտնուած վանքերն ալ անկարող գիւղօրէից օժանդակ ըլլալու վիճակի մէջ պէտք է դրուին»:

Այդ տեղեկագիրն ստորագրող անձինք երկար և մանրասրոյզ քննութենէ յետոյ այդ կարծիքն յայտնած են, որն որ անգործագրելի մնաց մինչև 1878 թուական. ո՛ր ատեն քաղաքական վիճակի փոփոխութիւն մը զգացուց մեզ թէ ո՛րչափ անփոյթ մնացած եմք մեր ներքին կազմութեան գործին, և ազգային ընկերութիւնը ստանձնեցին այդ պաշտօն իրենց ձեռքն եղած կարելի միջոցներով. բայց ցարդ հազիւ 28 վարժարան ունեցած են, մինչդեռ պէտք էր հարիւրաւորներ ունենային:

Պաշտօնական տեղեկագիրն այդ մասէն կերելի թէ՛ 1871 թուականէն ըզգացուած էր Հայաբնակ զաւառաց գիւղօրէից (և ոչ քաղաքաց) մէջ տարածել նախնական կրթութիւնը, այնպիսի իմն եղանակաւ որ գիւրաւանդելի լինի, և միանգամայն պարտաւորիչ. և անկարող գիւղօրէից օգնութեան սահմանել այն վանքայք որք անոնց մերկ կամ սահմանակից են, կամ լաւ ևս՝ որք նոյն գիւղօրէից պտղին կը Ժողովին:

Սակայն այժմ բոլոր Հայաստանի մէջ կարծեմ կոյիայ վանքը միայն Միացեալ ընկերութեանց արամագրութեան ներքեւ է. և այլ բազում վանքեր, մանաւանդ համբաւաւորներ կը շարունակեն իրենց նախնական անփոյթ ընթացքը, միաբանից տալով վայելել իւրեանց արգիւնքը, և անոնցմէ մերթ ընդ մերթ բաժին հանելով զիրենք պաշտպանող իշխանութեանց:

Արդ Միացեալ ընկերութիւնն այսպիսի մեծ և հիմնական նպատակ ընտրելով, գովելի բան մ'ըրած կըլլայ, և այս նպատակին հասնելու համար պէտք է խրախուսել զինքը:

Բայց կը կրկնենք թէ միայն գիւղօրէից և գիւղաքաղաքաց Հայ բնակչաց նախնական կրթութեան պէտք է աշխատիլ. և ոչ այն քաղաքաց, ուր իշխանութիւնը կեդրոնացած, իւր շրջա-

կայ գիւղորէից ժողովրդոց տգիտութեանէն մեծապէս կը քաջալերուի անոնց միասն հասցնելու մասին, և որք այետք չունին բնաւ արտաքին օգնութեան կրթութեւ իրենց զաւակները, եթէ կամին: Բայց զիւղացի ժողովուրդը մեծապէս պէտք ունին այդ արտաքին օգնութեան, որով ինքնին պիտի ուսանին ազատելու եղանակն այն կարգ մը հարստահարութիւններէ, որք ոչ թէ դրութեան, այլ քրմահաճ վարչութեան կամ բռնութեան արդիւնք են:

Այս կերպով կրնայ ընկերութիւնն՝ կարելի եղածին չափ շատ ազգայիններ կարելի եղածին չափ շուտ դաստիարակելու մեծ պիտոյքը ընել. և իրօք մեծ ծառայութիւն մատուցանել հայրենեաց:

Սակայն ականենք թէ Վանայ վարժապետանոցին փակմամբ այդ նպատակին ուղղակի ծառայած կըլլայ:

Ներկայ խնդրոյն մէջ թուանշանք աւելի կըլու ունին և համարիչ են: Ուրեմն դիմենք տեղեկագրին և անկէ առնունք այդ թուանշանները:

Տեղեկագիրը կըսէ թէ Վանայ վարժապետանոցին տարեկան 700 ոսկի ծախք կըլլայ, մինչդեռ այդ գումարով կարելի էր 23 նախակրթարաններ և 3500 ուսանող ունենալ:

Արդ եթէ Տնօրէն ժողովը վարժապետանոցին փակման առաջարկին հետ բերէր 23 նախակրթարանաց բացման առաջարկը, ոչ ոք կրնար առարկութիւն մ'ընել և այդ առաջարկին ընդդիմանալ: Բայց երբ և նախակրթարանաց բացման աւելիքը կը բերէ, յորոց մին շնորհիւ սովորոց Յաննատօղլոյ անձնակրթութեան, և երեքը շնորհիւ տեղացւոց ուսումնասիրութեան, ըսել է թէ ընկերութեան շնորհը նոյն նախակրթարանաց վարչութիւնը պիտի լինի. ուրեմն նոր ծախք չպիտի ունենայ ընկերութիւնն, և Վանայ վարժապետանոցին յատկացեալ 700 ոսկին պիտի զեղչուի ընկերութեան ելմտացոյցէն իբրև աւելորդ ինչ: Եթէ ընկերութիւնն 3500 ոսկեոյ ծախք մ'ունէր, այժմ՝ պիտի ունենայ 2800 ոսկեոյ ծախք:

Այս թուանշաններէն կը հետևի թէ ընկերութեան նիւթական անձկութեան պատճառաւ Վանայ վարժապետանոցի փակման առաջարկը կը ներկայանայ, ելմտացոյցին մէջ 700 ոսկեոյ զեղչ մը յառաջ բերելու խորհրդով:

Որչափ որ տեղեկագրին ի սկզբան կը ժխտէ այս ճշմարտութիւնը, սակայն քիչ մը յետոյ կը խոստովանի բացարձակապէս թէ, «պահեստի գումարը կիսելու մօտեցած, Յամնուան ծախուց բաւելու չափ ստակ հազիւ ունինք այսօր»:

Արդ ընկերութեան հօգին դրամն է: Ինչ որ ալ ըլլայ ընկերութեան անդամոց անձնակրթութիւնն և անձնակրթութիւնն, սակայն չեն կրնար Հայաստանի մէջ վարժարան մ'իսկ բանալ, եթէ այդ անձնակրթներն կամ անձնակրթները չլուծթան դրամ հաւաքել:

Բանդի եթէ դրամ լինէր, այժմ հարկ

չկար խնդիր անգամ ընել թէ արդեօք վարժապետանոցի աշակերտները վարժապետ պիտի լինին: Միթէ հարստին զաւակը վարժապետ չլինիր, երբ վարժապետութիւնը յարգ և շահ ունենայ. և ազբատին զաւակն ևս եթէ յարգ և շահ չունենայ, խոյս չտա՞ր վարժապետութեանէն: միթէ Պոլսոյ մէջ բազմաթիւ օրինակներ չկան: Եւ ո՞վ կրնայ ստիպել այս բանին. վանօրէից մէջ կրթութեանընդհանրեցական լինելու հարկը բարձած ատեննիս՝ վարժապետանոցաց մէջ կրնանք այդպիսի հարկ դնել. ինչ օգուտ կսպասուի այն վարժապետէն, որ առ հարկի պիտի դասախօսէ:

Եթէ դրամ լինէր, Վանայ մէջ կարելի կը լինէր ուսուցչական ընտիր մարմին մը համախմբել և կրթական բարձրագոյն միջոցներ հայթայթել:

Ուրիշ առթիւ մը, Հայրենիքի 77և թիւ թերթին մէջ, ըսած եմք թէ, եթէ Վանայ վարժապետանոցը բացուած չըլլար, խորհուրդ պիտի տայինք ընկերութեան որ չբանայ այնպիսի վարժարան, բայց արդէն բացուածը փակելու խորհուրդ չենք կրնար առ:

Եւ այժմ նաև չենք կրնար հանդարտ խղճիւ ըսել թէ փակեցէք այդ վարժարանը. քանզի 67 ուսանողներ կան անդ և մի տարիէն ուսմանց ընթացքն աւարտելու պատրաստ աշակերտներ: Եթէ իրօք Վանայ մէջ կան ուրիշ վարժարաններ, որք վարժապետանոցին հաւասար աստիճանն ունին, ուրեմն անտեղի է խղճել վարժապետանոցի փակումը: Բայց ան ատեն պէտք է ընդունիլ թէ անտեղի և անօգուտ ծախքն էր եղած են, այսբան տարիներէ ի վեր... չենք կրնար ըսել որ փակուի վարժապետանոցն այն պիտի բարձր չահեղու պատճառաւ, որոնց մեծապէս նպաստած է այդ վարժապետանոցը, իւր այնչափ հեռաւոր վայրին մէջ, բարոյական բարձր արժանիք տալով Հայրութեան, որ կը ցանկայ բարձրագոյն կրթութեան են... Գ.

(Մնացածը վաղը)

Ազգային ժողովոյ երէկուան նիստը զրեթէ ապարդիւն եղաւ: Ժողովը կիսիկոյ կաթողիկոսական խնդրովն միայն զբաղեցաւ, որուն համար թիւլպէտճեան նիկոզոս էֆէնտի հարցում ուղղած էր. ժողովը Ս. Նախագահին և վարչութեան բացատրութիւնները ըսելով այս մասին, սոյն խնդրոյն շարունակութիւնը վարչութեան յանձնեց իրեն տեղեկագրելու պայմանաւ:

Մշոյ Ս. Կարապետի վանուց վանահայր Գեր. Մամբրէ եպիսկոպոս վանահայրութեան պաշտօնէն հրաժարական զրկել է ի Պատրիարքարան:

Ս. Կարապետի վանուց միաբանութիւնն ալ Գեր. Մամբրէ եպիսկոպոսի ութ տարիէ ի վեր վանքին հասուցած նիւթական և բարոյական միասնեքը թուելով, անոր պաշտօնանկութիւնը խնդրել է:

Վարչութիւնը այս մասին անօրէնութիւն մը չըբաւ դեռ:

Գաւառացի հայ մը որ Պատրիարքարանի մէջ ամուսնական դատ մ'ունի, չորեքշաբթի օր Ամուսնական սենեկին ներկայանալով, և իրեն զրկանք եղած ըլլալը յայտնելով, սկսեց է պուռալ կանչել: Գեր. փոխանորդը այս անհանձնողէ պըն իմանալով իւր ներկայութեան կանչեր և յորդորեր է որ պաշտօնական տեղի մէջ գոռում գոչում հանելէ զգուշանայ: Սակայն բողոքարկուն դարձեալ պուռալով, Գեր. փոխանորդին հրամանաւ սենեկէն դուրս հանուեր է. այն ատեն անմիտ դաղատացին զինքը բռնող բարապաններուն վրայ ատրճանակ պարպելու փորձ ըրեր, սակայն անմիջապէս բռնուելով, ոստիկանութեան յանձնուեր է:

Ազգա ին ժողովոյ խորհրդարանին մէջ ատրճանակ, Պատրիարքարանի մէջ ատրճանակ, իսկ դուրսը կատարեալ լուծութիւն և անտարբերութիւն. ահա մեր կեանքը և քաջութիւնը:

Ն Ե Ր Ք Ի Ն

Ռուսիոյ կայսեր Գերմանիոյ կայսեր հետ ընելիք տեսակցութիւնը Հովասի զարնուած հեռագրով մը կը հաստատուի: Այս լուրը քաղաքական աշխարհին մեծ զարմանք պատճառեց. վասն զի ոչ ոք կը յուսար որ այսպիսի տեսակցութիւն մը տեղի պիտի ունենայ:

Պէրլինէն թայմըզի զարնուած հեռագիր մը սոյն տեսակցութեան պատճառած տպաւորութիւնը փարատելու համար անշուշտ կըսէ թէ Տանցիկի մէջ ըլլալիք տեսակցութիւնը Աղէքսանդր կայսեր յանկարծական սրտումն է և քաղաքական կարեւորութիւն մը չունի:

Միւս կողմանէ Պէրլինէն զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Չարը սեպտեմբեր 1 ին Տէրփալա արքունի շողեանով Տանցիկ մեկնէր է: Պիզմարք իշխանը և Մոլթըէ կոմսը սոյն տեսակցութեան ներկայ պիտի գտնուին: Հեռագիրը կը յաւելու թէ դիւանագիտական ակումբներու մէջ թէ Ռուսիոյ և թէ Գերմանիոյ, թէ Ռուսիոյ և թէ Աւստրիոյ բարեկամական յարաբերութեանց տեսակէտով դոհասուցիչ կը նրկատուի սոյն տեսակցութիւնը որ երկու կայսերաց բարեկամութիւնը և ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու նպատակ ունի:

Աղէքսանդրիայէն զարնուած հեռագիր մը ցաւալի լուր մը կը հաղորդէ: Ատէնի մէջ մաղձացաւ (գօլթրա) երևան ելեր է, որմէ 37 հօդի բռնուելով, 30ը մեռեր են:

Բ. Դրան խնդրանք օտար թղթատունները թայմըզի սեպտեմբեր 3 թերթը ներս չընդունելու համար հրաման ստացեր են:

Բաց սակէ, կըսէ Սթամպուլ Շարիփը, Տէպա, Կոլուա և Բէբիւպիք Փրանսէզ գաղղիական թերթերուն ալ մայրաքաղաքս մտնելն արգելուեր է:

Փար կըսէ թէ ուսական դեսպան Պ. տը Նովիքօֆ, օսմանեան արժեթը:

Թատերաց պատուիրակներուն յայտարարել է թէ Ռուսիա իրենց պաշտօնին գործադրութեան առաջ բնաւ դժուարութիւն յարուցանելու մտադիր չէ :

— Տասներկու հոգիէ բաղկացեալ աւաղակախումբ մը Եպիրոսի մէջ փայտահարներու վրայ յարձակելով, անոնցմէ մին բռներ և իբրև պատանդ վար դնելով, 2,300 ֆրանք վրկանայ՝դին, 10 ձեռք դէպստ, զէնք և մթերք պահանջել է :

— Օգոստոս 16 ին Սելանիկի մէջ երկրաշարժ պատահելով, արեւելքէն դէպ ի արևմուտք շարժում եղեր է. սակայն վնաս չէ ծագեր :

— Աթէնքի մէջ գտնուած օտարազգի հիւանդները դարմանելու համար Հելլենական կառավարութիւնը 30 հազար ֆրանք բժշկաց տրամադրութեան ներքև դեր է :

— Աթէնքի բնակիչներէն 20 հազար հոգի մայրաքաղաքին մէջ տիրած տաքութենէն և հիւանդութենէն չվնասուելու համար դիւղերը ցրուել են :

— Կորնթոսի պարանոցը կարելու արտօնութիւն ունեցող Թիւր զորավարը օգոստ. 31 ին Աթէնք դացեր և դործի սկսեր է :

— Չմիւռնիոյ Էմբարսիալ լրագրին մէջ հետևեալը կը կարդամք :

« Ինչպէս արդէն ծանուցած էինք, աւստրիական նաւատորմին հրամանատար Պ. Ուիլիլիմօէր, սպայներ և քաղաքիս աւստրիական հիւպատոսը ներկայ գտնուեցան այն շքեղ կոչուներին զոր Ալի փաշա յանուն Վեհ. Սուլթանին տուաւ :

« Կուսակալը իւր բարձրատիճան պաշտօնատարաց հետ իւր հիւրերուն մեծափառ ընդունելութիւն մ'ըրաւ : Սեղանը պալատան սրահին մէջ պատրաստուած էր որ խիստ շքեղ կերպով լուսազարդեալ էր : Սեղանին վրայ Ալի փաշա յանուն Վեհ. Սուլթանին, Աւստրիոյ կայսեր, կայսրուհւոյն և կայսերական ընտանեաց կենացը բաժակ առաջարկեց : Ծովակալն ալ փոխադարձաբար Սուլթանին կենացը խմեց : Յետոյ կուսակալը ծովակալին և բոլոր սպայներուն կենացը խմելով, ծովակալը գաւաթ ի ձեռին Ոսմանեան ծովային զօրութեան բարդաւաճման համար բարեմաղթութիւններ ըրաւ : Այս միջոցին նուազածուաց խումբ մը խիստ գեղեցիկ երգեր կը նուագէր : Ճաշը գիշերուան մինչև ժամը մէկ տևեց և բոլոր բազմականք ուրախ և զուարթ տեղերնին վերադարձան » :

— Լրագրաց մէջ հրատարակուած էր թէ Պարսից Եահը Եւրոպա ճամբորդելու ատեն մայրաքաղաքս չպիտի հանդիպի Եէյլս Ուպէյտուլահի հոս գտնուելուն պատճառաւ :

Սթամպուլ կըսէ թէ Եէյլս Ուպէյտուլահ մայրաքաղաքիս մաս դաւաւմը պիտի զրկուի բնակելու համար :

— Տերվիչ փաշա Պոլիս կանչուել է :

— Աւաղակաց խումբ մը առաջնորդութեամբ անուանի Բօլլինայի Նովբուլի, Բէրմէթի գայմադամութեան

Չիկօր գիւղին բնակիչներէն ինն հոգի գերի բռներ է : Միւռնոյն խումբը Պօպիսքա անուն գիւղն ալ աւարի տուեր է : Ասոնք իրենց գողօնները տեղոյն պէյերուն ի պահ կուտան եղեր :

— Պոլսոյ եղեռնադատ ատեանը Սերաստացի Մատթէոս անուն Հայ մը ըսպաննող Սթամպուլին 15 տարուան շրջութեայկապ աշխատութեան դատապարտել է :

— Վագըթ լրագիրը Տպագրական տեսչութեան հրամանաւ դադարեցաւ :

— Թեսաղիոյ մահմետական հարուստներէն ոմանք մայրաքաղաքս կը հաստատուին :

— Սիւլէյմանիէէն գրուած թղթակցութիւն մը, կըսէ Լէվընթ, կը ծանուցանէ թէ Համօնտ ցեղին արչաւանքէն ծագած վնասները դարմանուիլ սկսեր են. վրած մզկիթները և աւարի տրուած և այրած գիւղերը վերստին շինուիլ ըսկըսեր են :

— Արեւելեան-Բուլղարի գանձային վիճակը բարեկարգելու համար Եւրոպայի ելմտագէտներ բերելու առաջարկութիւնը գաւառական ժողովին ներկայացուել է :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Օսմանեան արժեթղթոց բանակցութեան ժողովը երէկ իւր երրորդ նիստն ըրաւ Պետական խորհրդարանին մէջ, որ չորս ժամի չափ տևեց : յետոյ Սերվէր փաշա և Գանձուց պաշտօնեայ Միւռնի պէյ Առաջին նախարարին ներկայանուիլ երկար տեսակցութիւն մ'ունեցան :

— Գաղղիական դեսպան Պ. Թիսօ երէկ երեկոյ մայրաքաղաքս հասաւ, որով դեսպանական ակմբին անդամները գրեթէ ամբողջացան :

— Եգիպտոսի անգղիական հիւպատոս Պ. Մալթթ երեքչարթի օր Աղէքսանդրիա պիտի մեկնի : Պ. ժօրթ Հիւկ անգղիական դեսպանատան առաջին քարտուղար անուանեցաւ :

— Իրոսի մէջ անցեալ շաբաթ երկրաշարժ պատահելը ծանուցած էինք. վերջին տեղեկութեանց նայելով այս երկրաշարժը առաջինէն աւելի սաստիկ եղեր է և նոր շինուած տնակներէն շատերը վրէր են և բազմաթիւ նաւակներ ցամաք նետուել են. ժողովուրդը սարսափած լեռները վախչելով, վերստին դաղթել կը խորհի եղեր :

— Պաշտօնապէս կը ծանուցուի թէ կառավարութեանէն 1000 դահեկանէ վեր առնելիք ունեցողները մարտ և ապրիլ ամսականներն ի հաշիւ, կրնան գանձուց պաշտօնատունը դիմել և մաքսատան ապրանքներէն վոխարէնն ստանալու համար տոմսակ առնուլ, վասն զի սեպ. 5 էն սկսեալ մաքսատան ապրանքները վերստին աճուրդի պիտի դրուին, յաւաջիկայ կիրակի օր և 20 տոմսակ պիտի բաշխուի. և ամեն օր 20 տոմսակի ապրանք պիտի սրուի :

— Վեհ. Սուլթանը հրամայել է իւր

հովանաւորութեան ներքև գտնուող քաղաքային դպրոցին մէջ գիշերօթիկ աշակերտներ ալ ընդունիլ :

— Բժշկական դպրոցին պարկեարաշխութեան հանդէսը յառաջիկայ կիրակի օր պիտի կատարուի, ուր տէրութեան նախարարներն ալ ներկայ պիտի դրտնուին :

— Սերվիոյ իշխանը իւր տիկնոջ ու որդւոյն հետ իշլէն Վիէննա վերադարձեր է, իրեն ընկերակցող արտաքին դործոց նախարարն ալ Պէլկրատ էլերադարձեր է, սակայն իշխանը դեռ քանի մ'օր Վիէննա պիտի մնայ եղեր :

— Ճէրիտէ իւր այս աւուր քաղաքական տեսութեան մէջ Հայկական մամուլայի դէմ հետևեալ զրպարտական տողերը կը գրէ .

« Հայաստանի բարենորոգման մասին տարածեալ գաղափարները հայկական մամուլը թիրք մբռնած է. կը ցաւինք որ օսմանեան հոլին վրայ հրատարակեալ թերթերը, դործը տէրութեան և ազգին շահուց համաձայն չեն քննադատեր » :

— Երէկ Վագըթէն առնուլ ծանուցած էինք թէ Վանայ լճին վրայ նաւագնացութիւն հաստատելու համար, մէկը արտօնութիւն ուղեր է Բ. Դրնէն և թէ Պետական խորհուրդն ընդունելով, տեղիագիրը կը շինէ : Այսօր պաշտօնապէս կը ծանուցուի թէ վերջին պարբրութիւնը անհիմն է :

— Վիէննայի լուսարար աղքատ կլին մը որ Սալցպուրկի վիճակահանութենէն սոմսակ մը գնած էր, չափազանց խեղճութեան մէջ իյնալով, միտքը կը դնէ տոմսակը ծախելու ուստի պանդային կը դիմէ, որոյ գործակալը քննելով կըստուգէ թէ կնոջ ծախել ուղած սոմսը վերջին անգամի վիճակահանութեամբ 20 հազար ֆիլորին շահեր է :

ՄԵՐ ԳՈՐԾԻ ԶՆՆԵՐԸ

... Խմբագիր էֆէնտի

Ենթագրեանք թէ քսան գործաւորք գեանի վրայ տարածուած ծանր գեղան մի ի միասին քաշելով դէպի յառաջ քիչ մը հեռուն պիտի տանին : Այս նպատակաւ ինչպէս սովոր է պառկած գեռանին վրայ տարը տեղէ հաւատար հեռաւորութեամբ չուվանի կտորներ կը կապեն, ասոնց երկու ծայրերը երկայն և արձակ թողուլ բռնելու համար : Յետոյ յիշեալ 20 գործաւորք գերանին երկու կողմը կանգնելով դէմ առ դէմ չուվաններուն ծայրերէն բռնած կը պատրաստուին ամենքը մէկէն քաշելով, գերանը յառաջ սահեցնել գեանին վրայ :

Հիմա ամենքն ի միասին մեծ աղաղակով քաշալերելու համար հիսա' հիսա' հէյամօ կրկնելով քաշելու կերպարանք ցոյց կուտան : Այս 20 գործաւորաց ժամերով ցոյցած աշխոյժն ու եռանդը անսնդաց զարմանք կը պատճառեն, բայց գերանը հոն է : Այս գործաւորք քանի մի օր յաջողաբար կուգան նոյն հիսա' հիսա' հէյամօ գոչուով յառաջ

